ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով կինոխցիկների (տեսաձայնագրման սարքերի) ձեռքբերման նպատակով ձևավորված ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՁՍ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան **13.04.2023թ. ժամը 14:30**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Մարտիրոսյան, Տ. Ամիրյան, Ա. Մքոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Նազարյան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ա. Ազարյան

Պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Վ. Մկրտչյան

1. Էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի վերաբերյալ ստացված հարցադրման և պարզաբանման մասին

1.1 11.04.2023թ.-ին հնարավոր մասնակցի կողմից գնումների https://eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ստացվել է հարցում «ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՁՍ-23/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով նախատեսված կինոխցիկների (տեսաձայնագրման սարքերի) ձեռքբերման տեխնիկական բնութագրի վերաբերյալ.

Հարցում. «Հարգելի պատվիրատու Ձեր կողմից հրապարակված ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՁՍ-23/1 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ խնդրում եմ տալ պարզաբանում հետևյալ հարցերին.

1. Արդյոք պարտադիր պահանջ է հանդիսանում տեխնիկական բնութագրում նշված «առկա կարգավիճակը (ձայնագրվում է) իսկ տեսախցիկի լուսային ազդանշանը տեսանելի լինի դիմացից (տեսախցիկի դիմային հատվածում տեսաձայնագրման կարգավիճակում գտնվելու վերաբերյալ լուսային ազդանշան):» պայմանը, ինչով է այն պայմանավորված, քանի որ մեր կազմակերպությունը ցանկանում է մասնակցել տվյալ ընթացակարգին, առաջարկել ավելի բարձր չափորոշիչներ ունեցող սարքեր: Խնդրում ենք տալ հստակ պատասխան թե արդյոք ընդունելի կհամարվի տվյալ լուսային ազդանշանի առկայությունը սարքի կողային կամ վերևի հատվածում, որի թարթումը նույպես տեսանելի է առջևից

2. Խնդրում ենք պարզաբանել տեխնիկական բնութագրում նշված է՝ «Սարքի ծրագրային ապահովումը պետք է վերածրագրավորված լինի այնպես, որպեսզի բացառի սարքի տվյալների բազային կամ կարգավորումներին որևէ միջամտություն:» Հարց- տվյալների բազա պետք է հասկանալ տեսադարանը իր տեսաձայնագրություններով թե ինչը, քանզի տեխնիկական բնութագրի մեկ այլ կետում նշված է «Սարքը պետք է հնարավորություն ունենա տեսաձայնագրելու, նկարելու /ֆոտո/ և տեսաձայնագրելու ընթացքում նկարելու, ինչպես նաև տեսաձայնագրությունը սարքով վերարտադրելու հնարավորությամբ:», ինչը հակասություն է առաջացնում կետերի միջև

3. Խնդրում ենք պարզաբանել տեխնիկական բնութագրում նշված է՝ «Սարքի ծրագրային ապահովումը պետք է վերածրագրավորված լինի այնպես, որպեսզի բացառի սարքի տվյալների բազային կամ կարգավորումներին որևէ միջամտություն:»

4. Հարց – այսինքն հնարավոր չի լինելու տեսախցիկի կարգավորուների բաժնից փոփոխել օրինակ վիդեո կամ ֆոտո լուծումները կամ տեսաձայնագրությունների տևողությունների հնարավորությունը՝ 15 րոպե, 30 րոպե, 1 ժամ: Խնդրում ենք պարզաբանել

5. Խնդրում ենք պարզաբանել տեխնիկական բնութագրում նշված է՝ «Տվյալների բազա կամ կարգավորումներ մուտք գործելը պետք է հնարավոր լինի միայն պաշտպանված հատուկ ծրագրով և իր գաղտնաբառով (պետք է ունենա երկու գաղտնաբառ՝ կառավարողի և օգտագործողի):» Հարց – նշված չեն յուրաքանչյուր գաղտնաբառով կառավարողի և օգտագործողի գործառույթները և սահմանափակումները /միայն նշված է դիտելու և բեռնելու իրավունքները/, /նշված չեն մնացած գործառույթների իրավունքները՝ օրինակ ամսաթիվ, ժամ, տևողություն, տեսաձայնագրման որակ և այլն/: Հարկավոր է տարանջատել և նշել:

6. Խնդրում ենք նշել շուկայում գեթ մեկ սարք, որը համակարգչին միացված վիճակում ունի բեռնելու կամ դիտելու հնարավորություն և չունի այն ջնջելու հնարավորություն: Հարգանքով»

1.2 Հարցումը ուղարկվել է Պատասխանատու ստորաբաժանմանը և ստացվել է ստորև նշված պարզաբանումը.

<u>Պարզաբանում.</u> «Հայտնում ենք, որ.

1. Պարտադիր պայմանն է՝ «տեսախցիկի լուսային ազդանշանը տեսանելի լինի դիմացից»: Եթե լուսային ազդանշանը տեղադրված է կողային կամ վերևի հատվածում կամ այլ հատվածում և տեսանելի է դիմացից, միանշանակ ընդունելի է:

2. «Տվյալների բազա կամ կարգավորումներ մուտք գործելը պետք է հնարավոր լինի միայն պաշտպանված հատուկ ծրագրով և իր գաղտնաբառով (պետք է ունենա երկու գաղտնաբառ՝ կառավարողի և օգտագործողի)»: «Կառավարողի» կողմից կատարվում են ծրագրային կարգավորումները (ժամ, օր, տարեթիվ, հնարավորություն ներկառուցված հիշողության միջամտում, ավելորդ ֆայլերից հիշողությունը մաքրելու, ֆորմատ անելու, տեսաձայնագրման որակ ընտրելու և այլն:) «Օգտագործողի» կողմից տեսաձայնագրության ֆայլերը բեռնելու և դիտելու իրավունք, տեսախցիկի ներկառուցված հիշողության ցանկացած այլ գործողություն չի նախատեսվում, ինչպես նաև տեսախցիկի այլ կարգավորումները բացառվում են:

3. «Սարքի ծրագրային ապահովումը պետք է վերածրագրավորված լինի այնպես, որպեսզի բացառի սարքի *տվյալների բազային կամ կարգավորումներին* որևէ միջամտություն: Տվյալների բազա կամ կարգավորումներ մուտք գործելը պետք է հնարավոր լինի միայն պաշտպանված հատուկ ծրագրով և իր գաղտնաբառով»: Նշանակում է, որ սարքում առկա *նյութերին և կարգավորումներին* հասանելիություն հնարավոր է միայն հատուկ ծրագրի միջոցով:

4. «այսինքն հնարավոր չի լինելու տեսախցիկի կարգավորուների բաժնից փոփոխել օրինակ վիդեո կամ ֆոտո լուծումները կամ տեսաձայնագրությունների տևողությունների հնարավորությունը՝ 15 րոպե, 30 րոպե, 1 ժամ:» Տեսախցիկի կարգավորումները հասանելի են միայն «Կառավարողին» («Ադմինիստրատորին»):

5. «Կառավարողի» կողմից կատարվում են ծրագրային կարգավորումները (ժամ, օր, տարեթիվ, հնարավորություն ներկառուցված հիշողության միջամտում, ավելորդ ֆայլերից հիշողությունը մաքրելու, ֆորմատ անելու և այլ:) «Օգտագործողի» կողմից տեսաձայնագրության ֆայլերը բեռնելու և դիտելու

իրավունք, տեսախցիկի ներկառուցված հիշողության ցանկացած այլ գործողություն չի նախատեսվում, ինչպես նաև տեսախցիկի այլ կարգավորումները բացառվում են:

6. Շուկայում առկա բազմաթիվ մոդելներ համապատասխանում են տեխնիկական բնութագրին, կոնկրետ մոդելների օրինակներ Ձեզ ներկայացնելու պարտականություն պատվիրատուն չունի:»

Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությունը, որոշեց.

1. Այն ընդունել ի գիտություն և հրավերով սահմանված կինոխցիկների (տեսաձայնագրման սարքերի) ձեռքբերման տեխնիկական բնութագիրը թողնել անփոփոխ:
2. Հանձնարարել սույն ընթացակարգի քարտուղար Ս. Նազարյանին գնումների https://eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով պատասխանել հնարավոր մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Կարեն Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Կատյա Մարտիրոսյան

_____ Տիգրան Ամիրյան

_____ Աղասի Մքոյան

քարտուղար՝ _____ Սիրուշ Նազարյան